

շուրջը տուած էին (Պաշատուր եւ Հ. Թա-
ղէոս) իրարու ժամադրութիւն :

Նկատմամբ Արքեպիսկոպոսին բաղձալի
էր որ Զեր Սրբութիւնը օգնէ անոր եւ պաշտ-
պանէ զանիկա թագաւորին քով, որպէս զի
խաւանութիւն այն ամէն ձեռնարկները, զորոնք
կ'ուզէն ձեռնարկել անոր դէմ հերձուածող-
ները՝ իր հակառակորդները : Այսպէս հրա-
մայեց Նորին Երջանկութիւնը, որ մեծապէս
գնահատելով յիշեալ արքեպիսկոպոսին հա-
ւատոյ դաւանութեան գործը, հրաման ըրաւ
որ պահուի այն Ս. Հրեշտակապետ Բերդը,
այս Ս. Առաքելական Աթոռի ամէնէն կարեւոր
գրուածքներու շարքին :

Յանուն սուրբ Ժողովին պիտի գրուի նաեւ
նոյն Արքեպիսկոպոսին գովելու համար անոր
սուրբ որոշումը եւ մատուցանելու անոր ա-
մէն աջակցութիւն եւ միջնորդելու թագա-
ւորին քով, որպէս զի չհալածուի հերձուա-
ծողներէն :

Ուրիշ կողմէն ըրէք ինչպէս խոհեմ կը
թուի Զեր Սրբութեան :

Պաշատուր առանց հանդիպելու Հոռոմ վե-
րադարձաւ էջմիածին զեկուցանելու Մովսէս
կաթողիկոսին մի առ մի Լեհահայոց ներքին
անցուղարձերումասին, ինչ լսած էր, տեսած
եւ ապրած :

Քիչ յետոյ կը հասնի էջմիածին Լեհա-
հայոց կողմէն պատգամաւորութիւն մը, որուն
անդամներն էին Տէր Սիմէոն քահանայ եւ